

«ՀայՌուսագաղարդ» ՓԲԸ
2009 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ՆՆ ՆԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆԱԽՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է հաշվի առնելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի մարտի 7-ի №97Ա որոշմամբ համաձայնեցված ներդրումային ծրագրի շրջանակներում 2009 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2010 թվականի մայիսի 5-ի №ARG-01-14/1831 գրությամբ ներկայացված հաշվետվությունը:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի 2009 թվականի ներդրումային ծրագիրը

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի 2009 թվականի տարեկան ներդրումային ծրագիրը հանդիսանում է ընկերության 2009-2011 թվականների եռամյա ներդրումային ծրագրի բաղկացուցիչ մասը: Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր տարբեր միջոցառումներ իրականացնել գազափոխադրման և գազաբաշխման համակարգերում՝ դրանց վերակառուցման, վերազինման, նոր բաժանորդների միացման և այլ հիմնախնդիրների լուծման նպատակով:

Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2009-2011 թվականի ընթացքում իրականացնել 61 615,0¹ մլն դրամի ներդրումներ, որից 27 129,0 մլն դրամը 2009 թվականին, այդ թվում՝


- գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումներ՝ 1 807,3 մլն դրամ
- Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման ուղղությամբ ներդրումներ՝ 1 083,4 մլն դրամ,
- գազափոխադրման համակարգի ընդլայնման ուղղությամբ ներդրումներ՝ 16147,0 մլն դրամ,
- գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ 258,8 մլն դրամ,

¹ Սույն վերլուծական տեղեկանքում նշված բոլոր գումարները չեն ներառում ԱԱՀ-ն:

- գազաբաշխման համակարգի ընդլայնման ուղղությամբ ներդրումներ՝ **750,0** մլն դրամ,
- գազաբաշխման համակարգի վերակառուցման ուղղությամբ ներդրումներ՝ **2315,7** մլն դրամ,
- ազդանշանային սարքերի ինքնաշխատ վթարային կափույրների տեղակայում՝ **4500.0** մլն դրամ:
- գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ՝ **266,8** մլն դրամ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է ընկերության **2009** թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

ԳՐԱՖԻԿ 1



«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի կողմից 2009 թվականի ներդրումային գործունեության արդյունքները

Համաձայն «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության, ընկերությունը **2009** թվականի ընթացքում կատարել է **71247.9** մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել **51541.4** մլն դրամի հիմնական միջոցներ և իրականացվել են **920.9** մլն դրամի ընթացիկ ծախսեր: Մնացած **19706.5** մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ կամ ավարտվել են, սակայն դեռևս չեն շահագործվում:

Ստորև` աղյուսակ 1-ում, ներկայացված է ընկերության կողմից փաստացի իրականացված և հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալների համեմատականը:

աղյուսակ 1

N	Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը	Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը		Ընդամենը կատարված ներդրումներ		Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%
1	2	3		5		7
1	Գազափոխադրման համակարգի ընդլայնմանն ուղղված ներդրումներ	16 147.0	59.5%	40 472.0	56.1%	250.6%
2	Արժվանի ԳՄՊԿ-ի վերակառուցմանն ու արդիականացմանն ուղղված ներդրումներ	1 083.4	4.0%	1 037.5	1.4%	95.8%
3	Գազափոխադրման համակարգի վերակառուցմանն ուղղված ներդրումներ	1 807.3	6.7%	2 282.6	3.2%	126.3%
4	Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	258.8	1.0%	0.0	0.0%	0.0%
5	Գազաբաշխման համակարգի ընդլայնմանն ուղղված ներդրումներ	750.0	2.8%	2 062.5	2.9%	275.0%
6	Գազաբաշխման համակարգի վերակառուցմանն ուղղված ներդրումներ	2 315.7	8.5%	2 967.7	4.1%	128.2%
7	Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ	4 766.8	17.6%	5 134.7	7.1%	107.7%
8	Այլ ներդրումներ			920.9	1.3%	
9	Հարզդան ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի կառուցում	0.0		17 290.9	24.0%	
10	Ընդամենը	27 129.0		72 168.7		
11	Ընդամենը` առանց գազափոխադրման համակարգի ընդլայնման և Հրազդան ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի կառուցում	10 982.0		14 405.9		131.2%

Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշը (131,2%) դիտարկվել է առանց հաշվի առնելու Հարգդան ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի կառուցման և գազափոխադրման համակարգի ընդլայնման ուղղությամբ ներդրումների կատարման ցուցանիշը, քանի որ նշված երկու ուղղություններով իրականացված ներդրումները չեն ներառվում սպառողներին առաքվող բնական գազի փոխադրման և բաշխման սակագներում:

Ստորև` աղյուսակ 2-ում, ներկայացված են իրականացված ներդրումների ձևավորման աղբյուրները:

Աղյուսակ 2
մլն դրամ

	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Կապիտալացված և հետագա կապիտալացման ենթակա ծախսեր	Ընթացիկ ծախսեր	ԸՆԴԱՄԵՆԸ
1	2	3	4	5
1	Նախորդ ժամանակահատվածում իրականացված ներդրումներից	37 488,7	0,0	37 488,7
2	Կողմնակի կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներից	18 716,5	437,8	19 154,3
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներից	461,3	0,0	461,3
4	Սեփական ուժերով կատարված աշխատանքներից	14 581,3	483,1	15 064,5
4,1	աշխատավարձ և սոցիալական ապահովության ծախսեր	1 463,6	121,4	1 585,0
4,2	հումք և նյութեր	4 002,6	329,2	4 331,8
4,3	տեղակայման ենթակա սարքավորումներ	9 023,7	0,0	9 023,7
4,4	այլ	91,4	32,5	123,9
5	ԸՆԴԱՄԵՆԸ	71 247,8	920,9	72 168,7

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, ընկերությունը 2009 թվականին ներդրումների իրականացման նպատակով ներգրավել է 72168.7 մլն դրամ գումար, որից մոտ 98.7 %-ը հանդիսանում է կապիտալացած և հետագայում կապիտալացման ենթակա աշխատանքների արժեքը, իսկ 1.3%-ը ընթացիկ ծախսերով ձևակերպված աշխատանքների արժեքը: Ներդրումների 26.54%-ն իրականացվել է այլ կազմակերպությունների միջոցով, իսկ 20.87%-ը սեփական ուժերով: Ներդրումների մնացած 51.95%-ը նախորդ ժամանակահատվածում իրականացված

ներդրումներն են, իսկ **0.64%**-ը՝ տեղակայում չպահանջող հիմնական միջոցների արժեքը:

«ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Ստորև, առավել հանգամանալից, ըստ ուղղությունների, ներկայացված է ընկերության կողմից **2009** թվականին իրականացված ներդրումների ծավալը՝ հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից: Հարկ ենք համարում նշել, որ սույն վերլուծական տեղեկանքում սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ներկայացված ծավալը հետագայում կարող է ճշգրտվել մոնիթորինգի արդյունքում:

Գազափոխադրման համակարգի վերակառուցում

Գազափոխադրման համակարգի վերակառուցման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել **1807.3** մլն դրամի ներդրումներ՝ մայրուղային գազատարերի շինարարություն, գազատարերի բացված հատվածների վերականգնման և ամրացման, գազաբաշխիչ կայանների շինարարության, չափիչ հանգույցների արդիականացման, էլեկտրապաշտպանիչ կայանների, գծային փականների վերազինման և նորերի տեղադրման, ինչպես նաև գազափոխադրման համակարգում հաշվառման համակարգի արդիականացման նպատակով:

Ընկերությունն այս ուղղությամբ իրականացրել է **3341.4** մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում ավարտվել են **2896.7** մլն դրամի աշխատանքներ: Իրականացված ներդրումների ծավալում **216.1** մլն դրամ արժեքով աշխատանքներ նախատեսված չեն ներդրումային ծրագրով և **1130.6** մլն դրամի ներդրումները գերազանցել են ներդրումային ծրագրով տվյալ ուղղության համար նախապես համաձայնեցված ծավալը:

Ներդրումների համաձայնեցված ծավալը հիմնականում գերազանցվել է (**1130.6** մլն դրամից **1020.5** մլն դրամը) Երևանի ԳԲԿ-4-ի համալիրի կառուցման նպատակով իրականացված ներդրումների արդյունքում, որոնք նախատեսված էր իրականացնել ընկերության **2008** թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում: Հաշվի առնելով, որ նշված աշխատանքը նախատեսված էր **2008** թվականի

ներդրումային ծրագրով և կառուցված **D=720**մ տրամագծով միջին ճնշման գազատարն ապահովել է Գեղանիստ գյուղի ջերմոցային տնտեսությունների գազամատակարարումը և կարգավորել է գազի ճնշումը Արգավանդ գյուղի գազամատակարարման ցանցում, այս ուղղությամբ կատարված ներդրումները հաշվի են առնվել սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

Միննույն ժամանակ, Երևանի ԳԲԿ-2-ից Երևանի ՋԷԿ-ը սնող գազատարի վերանորոգման ուղղությամբ նախատեսված **374.0** մլն դրամի փոխարեն իրականացված ներդրումների փաստացի ծավալը կազմել է **445.5** մլն դրամ: Հաշվի առնելով, որ նախատեսված ներդրումների ծավալի գերազանցումը կապած է եղել վերանորոգվող գազատարի աշխատանքային ճնշման բարձրացման անհրաժեշտությամբ՝ նշված ներդրումները ևս ներառվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

Նախապես համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող մնացած **38.6** մլն դրամի ներդրումները, ինչպես նաև ներդրումային ծրագրով չնախատեսված **216.1** մլն դրամի ներդրումները ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, մասնավորապես.

մլն դրամ

Ներդրումների ուղղությունը	Ներդրումային ծրագրով չնախատեսված	Ներդրումային ծրագրի ծավալները գերազանցող	Ընդամենը
Մայրուղային գազատարերի շինարարություն, վերատեղադրում և վթարային հատվածների փոխարինում	80.8	7.8	88.6
Գազաբաշխիչ կայանների շինարարություն և վերազինում	129.7	-	129.7
Գծային փականների տեղադրում և ամբողջական վերազինում	0.6	-	0.6
Էլեկտրապաշտպանիչ կայանների տեղադրում և ամբողջական վերազինում	0.1	17.4	17.5
Էներգամատակարարման համակարգի վերականգնում	2.2	-	2.2

Գազափոխադրման համակարգի հաշվառման բարելավում	2.7	13.4	16.1
Ընդամենը	216.1	38.6	254.7

Հաշվի առնելով վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված **2896.7** մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է **2641.9** մլն դրամը: Սակայն հարկ ենք համարում նշել, որ սակագների վրա ներդրումների ազդեցության ճշգրիտ գնահատման նպատակով ընկերությունն իր ներդրումնային ծրագրերում պետք է ներառի այն բոլոր աշխատանքները, որոնք նախատեսում է ավարտել տվյալ տարում՝ անկախ նախորդ տարիների ներդրումային ծրագրերում դրանց ներառված լինելու հանգամանքից:

Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցման և արդիականացման նպատակով նախատեսված ներդրումներ

2009 թվականին Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի ուղղությամբ նախատեսվում էր ներդնել **1083.4** մլն դրամ գումար: Փաստացի ներդրվել է **1037.5** մլն դրամի գումար, որի արդյունքում ավարտվել են **816.7** մլն դրամի աշխատանքներ: Այս ուղղությամբ իրականացված ներդրումների ծավալում **132.2** մլն դրամ արժեքով աշխատանքներ նախատեսված չեն **2009** թվականի ներդրումային ծրագրով, այդ թվում Աբովյանի ԳՍՊԿՄ **N13** գազահորի վերանորոգման նպատակով իրականացված **74.9** մլն դրամի ներդրումները: Նշված աշխատանքն իրականացվել է **2008** թվականին՝ այդ տարվա ներդրումային ծրագրի շրջանակում, սակայն “Тасис Инжейт” միջազգային ծրագրի շրջանակներում ստացված հորատման խողովակների սեփականության իրավունքի հետ կապված խնդիրների հետևանքով պաշտոնական ձևակերպում ստացել է միայն **2009** թվականին:

Ներդրումային ծրագրով չնախատեսված՝ մնացած **57.3** մլն դրամի ներդրումները նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից. Մասնավորապես.

մլն դրամ

Ներդրումների ուղղությունը	Ներդրումային ծրագրով չնախատեսված
Աբովյանի ԳՄՊԿՄ N17 գազահորի վերանորոգում	45.8
Աբովյանի ԳՄՊԿՄ N18 գազահորի վերանորոգում	11.5
Ընդամենը	57.3

Հաշվի առնելով վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված **816.7** մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է **759.4** մլն դրամը:

Գազափոխադրման համակարգում այլ ուղղություններով ներդրումներ

Գազափոխադրման համակարգի համար նախատեսվում էր ձեռք բերել **14** միավոր մեքենա-մեխանիզմներ, ճնշման և ջերմաստիճանի տվիչներ, ճնշման և ջերմաստիճանի տվիչների կարգաբերիչներ և դրանց օժանդակ սարքավորումներ, կապի միջոցներ և այլն: Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել **258.8** մլն դրամ: **2009** թվականին ընկերությունն այս ուղղությամբ ներդրումներ չի իրականացրել:

Գազաբաշխման համակարգի ընդլայնում և նոր բաժանորդների միացում

Այս նպատակով **2009** թվականին նախատեսվում էր իրականացնել **750.0** մլն դրամի ներդրումներ, որից **250.0** մլն դրամը գազաբաշխման ցանցի ընդլայնման, իսկ **500.0** մլն դրամը նոր բաժանորդների միացման նպատակով: Պետք է ավարտվեին նախկինում սկսված սակայն անավարտ գազատարերի շինարարությունը և գազաբաշխման ցանցին միացվեին **20 000** նոր բաժանորդներ: Փաստացի իրականացված ներդրումների ծավալը կազմել է **1151.1** մլն դրամ: Իրականացված ներդրումների արդյունքում ավարտվել են **471.8** մլն դրամի գազատարերի կառուցման և վերատեղադրման աշխատանքներ, ինչպես նաև սպառողների համար տեղակայվել են **603.4** մլն դրամի հաշվառման համալիրներ:

2009 թվականի ընթացքում գազաբաշխման ցանցին են միացվել նոր **22398**

բաժանորդներ և ընկերության բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է **596353**: Այս ուղղությամբ իրականացված ներդրումներն ամբողջ ծավալով ներառվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

Գազաբաշխման համակարգի վերակառուցում

Գազաբաշխման համակարգի վերակառուցման նպատակով նախատեսվում էր իրականացնել գազատարերի վերականգնման և վերատեղադրման, էներգամատակարարման և հաշվառման համակարգերի արդիականացման, էլեկտրապաշտպանիչ կայանների տեղակայման և այլ աշխատանքներ: Այս ուղղությամբ նախատեսվում էր ներդնել **2315.7** մլն դրամ: Ընկերությունն իրականացրել է **2818.8** մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում ավարտվել են **2579.3** մլն դրամի աշխատանքներ:

Իրականացված ներդրումների ծավալում ընկերությունը ներառել է Գեղարքունիքի մարզի Լաստոչկա-Ճամբարակ գազատարի արժեքը, որը ընկերությանն է հանձնվել «ՀայԳազարդ» ՓԲԸ-ի կողմից, իսկ **2009** թվականին ընկերության կողմից իրականացված գույքագրման արդյունքում պարզվել է, որ գազատարը բարվոք վիճակում է և ենթակա է շահագործման, որի արդյունքում այն հաշվառվել է ընկերության շահագործվող հիմնական միջոցների ցանկում: Սակայն, հաշվառնելով, որ նշված գազատարը շահագործման հանձնելու նպատակով ընկերությունը ներդրումներ չի իրականացրել, նշված աշխատանքն ամբողջ ծավալով նվազեցվել է սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Բացի վերը նշվածը, հաշվետվության մեջ ներառվել է **19.1** մլն դրամ ընդհանուր ծավալով գազաբաշխման համակարգի վերականգնման աշխատանքների նախագծերի արժեք, որոնց շրջանակում աշխատանքների ավարտված լինելը որևէ կերպ չի հիմնավորվել սույն հաշվետվության շրջանակներում: Ուստի նշված ներդրումները ևս ամբողջ ծավալով նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցվել են նաև համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող **67.9** մլն դրամի, ինչպես նաև ներդրումային ծրագրով չնախատեսված` **64.9** մլն դրամի ներդրումները, մասնավորապես.

Ներդրումների ուղղությունը	Ներդրումային ծրագրով չնախատեսված	Ներդրումային ծրագրի ծավալները գերազանցող	Ընդամենը
Գազաբաշխման գազատարերի վերականգնում, վերատեղադրում	-	46.5	46.5
Գազաբաշխման համակարգի հաշվառման համալիրի բարելավում	51.6	13.4	65.0
Էներգամատակարարման համակարգերի արդիականացում	13.3	7.6	20.9
Էլեկտրապաշտպանիչ կայանների տեղադրում	-	0.3	0.3
Ընդամենը	64.9	67.9	132.8

Հաշվի առնելով վերը նշվածը, այս ուղղությամբ իրականացված **2579.3** մլն դրամի ներդրումների ծավալից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում ներառվել է **2303.0** մլն դրամը:

Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում ներդրումներ

Գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտում ներդրումներ պետք է իրականացվեին հետևյալ ուղղություններով`

- շենքերի և շինությունների բարեկարգում,
- մեքենա-մեխանիզմների ձեռքբերում և վերասարքավորում,
- անվտանգության համակարգերի արդիականացում,
- գույքի կառավարման միասնական համակարգի ներդրում:

2009 թվականին շենքերի և շինությունների բարեկարգման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել **23.3** մլն դրամի ներդրումներ: Փաստացի իրականացվել են **57.9** մլն դրամի ներդրումներ: Ընդհանուր առմամբ ավարտվել են **51.5** մլն դրամի շենքերի և շինությունների բարեկարգման աշխատանքներ:

Նշված ուղղությամբ իրականացված ներդրումների ծավալում **23.0** մլն դրամ ընդհանուր ծավալով աշխատանքներ նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից, քանի որ գերազանցել են ներդրումների

համաձայնեցված ծավալը: Բացի այդ, նվազեցվել է **5.1** մլն դրամ ծավալով ք.Երևան, Արցախի **43**, Էրեբունու ՏԱՇԾ սանհանգույցի կառուցման աշխատանքը, քանի որ աշխատանքի բնույթը և այդ նպատակով իրականացված ներդրումների ծավալը հասկանալի չէ:

Մեքենա-մեխանիզմների ձեռքբերման և վերասարքավորման ուղղությամբ նախատեսվում էր ներդնել **85.5** մլն դրամ: Ընկերությունը **2009** թվականի ընթացքում ներդրել է **199.8** մլն դրամ: Այս ծավալում **50.4** մլն դրամը վարչական ապարատի համար ձեռքբերված մարդատար մեքենաներն են և մեկ վերամբարձ աշտարակային կոունկ (**2.7** մլն), որոնք նվազեցվել են սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից՝ ներդրումային ծրագրով նախատեսված չլինելու պատճառով: Մինևույն ժամանակ, **2009** թվականին իրականացված ներդրումների ծավալում ներառվել են **69.3** մլն դրամ ընդհանուր ծավալով թվով **18** շարժական կոմպրեսորային կայանների (ճնշակ) ձեռքբերման ուղղությամբ կատարված ներդրումները: Ճնշակները նախատեսվում էր ձեռք բերել ընկերության **2008** թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում, և չնայած այն հանգամանքին, որ դրանք ձեռք են բերվել **2008** թվականին, փաստացի ձևակերպվել են **2009** թվականին:

Գազաբաշխման համակարգի տեխնիկա և տեխնոլոգիա ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել **4601.1** մլն դրամի ներդրումներ, որից **4500.0** մլն դրամը՝ սպառողների մոտ ազդանշանային սարքերի ինքնաշխատ վթարային կափույրների տեղակայման նպատակով: Ընկերությունը **2009** թվականին այս ուղղությամբ իրականացրել է **4842.3** մլն դրամի ներդրումներ, որի արդյունքում ավարտվել են **4837.1** մլն դրամի աշխատանքներ:

Այս ուղղությամբ իրականացված ներդրումների ծավալից ներդրումային ծրագրով նախատեսված չլինելու պատճառով նվազեցվել է նաև **207.4** մլն դրամ՝ որի շրջանակում ընկերությունը ձեռք է բերել **7.2** մլն դրամի ոչ նյութական ակտիվներ և **200.2** մլն դրամի համակարգչային տեխնիկա, գրասենյակային գույք, հաստոցներ և գործիքներ: Իրականացված ներդրումների ծավալից նվազեցվել են նաև ներդրումային ծրագրով չնախատեսված **28.9** մլն դրամի գազաբաշխման համակարգի կապի բարելավման միջոցառումների ուղղությամբ կատարված ներդրումները և **5.5** մլն դրամի հրդեհային անվտանգության բարձրացման

միջոցառումների ուղղությամբ կատարված ներդրումները:

Արդյունքում, գազաբաշխման համակարգի շահագործման և սպասարկման ծառայությունների ոլորտներում իրականացված ներդրումների ծավալից նվազեցվել են **347.0** մլն դրամի ներդրումներ և սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը կազմել է **4800.8** մլն դրամ:

Ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումներ

Իրականացված ներդրումների կազմում ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումները **920.9** մլն դրամ արժեքով իրենցից ներկայացնում են գազատարերի և գազահաշվիչների, թվով **436** ավտոտրանսպորտային միջոցների և մեխանիզմների, համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի և այլ հիմնական միջոցների ընթացիկ նորոգման ծախսեր: Նշված ծախսերը սակագնում ներառվող ընթացիկ ծախսեր են, ուստի դրանք ամբողջ ծավալով ենթակա են նվազեցման սակագնով փոխհատուցվող ներդրումների ծավալից:

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ամփոփ ծավալը

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի ամփոփ վերլուծությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

մլն դրամ

1	2009 թվականի ընթացքում իրականացված ներդրումներ	72 168.7
2	2009 թվականի ընթացքում իրականացված անավարտ աշխատանքների արժեքը	19 706.5
3	2009 թվականի ընթացքում իրականացված ավարտված ներդրումներ	52 462.2
4	Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից նվազեցված ներդրումներ, այդ թվում`	40 906.9
4.1	<i>Գազափոխադրման համակարգի ընդլայնում</i>	38 918.6
4.2	<i>Հրագրանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի կառուցում</i>	132.0
4.3	<i>Հանձնաժողովի հետ չհամաձայնեցված ներդրումների ծավալը, այդ թվում`</i>	803.9
4.3.1	<i>Գազափոխադրման համակարգի վերակառուցում</i>	216.1
4.3.2	<i>Աբովյանի գազի ստորգետնյա պահեստարան-կայանի վերակառուցում և արդիականացում</i>	57.3
4.3.3	<i>Գազաբաշխման համակարգի վերակառուցում</i>	208.4
4.3.4	<i>Գազաբաշխման համակարգում այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումներ</i>	322.0
4.4	<i>Հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող չհիմնավորված ներդրումներ</i>	131.5
4.5	<i>Ընթացիկ ծախսերով ձևակերպված ներդրումներ</i>	920.9
5	2009 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը	11 555.3